Մաս – 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Applied Ethics

Ի՞նչ է ***կիրառական բարոյագիտութիւնը:***

Կիրառական բարոյագիտութիւնը (անգլ.՝ Applied Ethics, գերմ.՝ Angewandte Ethik), որպէս ընդհանուր ու վերին հասկացութիւն կը բովանդակէ տարբեր բնագաւառներու՝ գործնական ու կիրառելի բարոյագիտութիւնը: Կիրառական բարոյագիտութեան հիմքը ընդհանուր բարոյագիտութիւնն է, որմէ կը ստանայ իր բարոյագիտութեան հիմնական հասկացութիւնները, հիմնաւորումն ու զանազան տեսութիւնները: Ասոնց վրայ կու գան աւելնալ, տուեալ բնագաւառի յատուկ մասնագիտական գիտելիքները:

20-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ, տարբեր բնագաւառներու յատուկ կիրառական բարոյագիտութիւնը աւելի տարածուեցաւ, որովհետեւ արդիական ընկերութիւնները բարոյագիտութենէն, զանազան հարցերու մասին՝ բարոյական գործնական ու կիրառելի դիրքորոշումներ կը պահանջէին: Եթէ սկզբնական շրջանին, բժշկական ու կենսաբանական բնագաւառներու բարոյագիտութիւնը հետաքրքրութեան կիզակեդրոն կը հանդիսանար, շուտով սակայն, ասոնց վրայ կու գային աւելնալ բազմաթիւ այլ բնագաւառներու յատուկ բարոյագիտութիւնը, ինչպէս՝ տնտեսական, բնապահպանական, ծինաբանական, ընտանեկան, քաղաքական ու գիտական զանազան ճիւղերու վերաբերեալ կիրառական բարոյագիտութիւնը:

Բնագաւառներու արագօրէն բազմացման եւ հարցերու զանազանութեան հետ, ժամանակի ընթացքին, մեծապէս փոփոխութեան ենթարկուեցան նաեւ կիրառական բարոյագիտութեան *կարեւորութիւնն* ու *դիմագիծը,* հետեւեալ ձեւով.-